ԱՐՎԵՍՏԻ ԱՇԽԱՐՀՈՒՄ

Ռ. Համբարձումյան.
Դու կարծում ես, որ ես քո հորբո՞ւկն եմ... (Մանկան տարվա առթիվ)

ԼՈՒՍԱՆԿԱՐԻՉԸ ԵՎ ԹԱՏԵՐԱԿԱՆ ԼՈՒՍԱՆԿԱՐԻՉԸ

Լավ գործ է արվում ժուռնալիստի տանը. այստեղ ցուցահանդեսներ բացվում են գրեթե նույնքան հաճախադեպ, որքան նկարչի տանը: Նաև լուսանկարչական ցուցահանդեսներ:

Անցյալ տարվա աշնանը միմյանց հաջորդեցին լուսանկարիչ Ռաֆայել Համբարձումյանի և թատերական լուսանկարիչ Աղասի Կլեկչյանի ցուցահանդեսները՝ ամեն մեկը հետաքրքիր յուրովի:

Ռ. Համբարձումյանը ծանոթ անուն է լուսանկարչության մեջ: Նրան համբավ բերեց միութենական և միջազգային ցուցահանդեսներում մրցանակի արժանացած «Վիբաբույժ» լուսանկարը: Դրանից հետո էլ նա բազմաթիվ մեդալների ու դիպլոմների է արժանացել, ստեղծել է դիմանկարներ, որոնք աչքի են ընկնում պատկերվողի հոգեբանության այնպիսի նուրբ արտացոլմամբ, որ դրանք վստահորեն կարելի է համարել արվեստի, լուսանկարչական արվեստի գործեր: Այդ դիմանկարներից թերևս լավագույնը «Մայրն» է, գրաֆիկական հատակությամբ աչքի ընկնող մի լուսանկար, որ արթնացնում է խորին ակնածանք ծեր կնոջ տառապանքի հանդեպ:

Արվեստի կնիք է կրում «Աղջնակն ու կովը» լուսանկարը. սա, կարծես, ոչ թե լուսանկար է, այլ գեղանկարչական կտավի վերարտադրություն, որ գրավիչ է իր բնական կոմպոզիցիայով, լուսանկարչի քնքուշ վերաբերմունքով իր փոքրիկ հերոստուհու նկատմամբ:

Դիմանկարից ոչ պակաս, Ռ. Համբարձումյանին հրապուրում է բնանկարը: Լավ բնանկարներ շատ կային ցուցահանդեսում և դրանց մեջ՝ հատկապես ճարտարապետական հուշարձանների պատկերումները: Այստեղ լուսանկարչին հաջողություն է բերում այն, որ նա ընկալում է ամեն

A.R.A.R.@

Ռ. Համբարձումյան. Իմ Հայաստան

մի հուշարձանի յուրահատկությունը և կարողանում է գտնել դրա մատուցման կերպը, պատկերման շահեկան տեսանկյունը: Նայելով այդ լուսանկարներին, դիտողը վաղածանոթ հուշարձանի մեջ գտնում է մի նոր հրապույր, ուզում է վերըստին տեսնել թվում է թե բոլոր կողմերով իրեն լավ հայտնի հուշարձանը: Սա լուսանկարչի անմերժելի արժանիքն է:

Նրան մնում է խորացնել իր նախասիրությունները, ընդլայնել լուսանկարչական օբյեկտիվի տեսադաշտը, իր մեջ առնելով կյանքի նաև «հասարակ», «անշուք» երևույթները՝ գեղեցկություն գտնել նաև դրանց մեջ:

* * *

Թատերական լուսանկարիչ Աղասի Կլեկչյանի ցուցահանդեսն իր շուրջ երեք տասնյակ տարվա աշխատանքի հանրագումարն էր իր ընտրած լավագույն նմուշներով: Շատ էին դրանք, բայց տասնապատիկ ավելին են ցուցահանդեսում տեղ չգտածները: Դրանք կազմում են թատերական լուսանկարների այնպիսի մեծ քանակ, որ իրավունք են տալիս Աղասի Կլեկչյանին կոչելու մեր բեմական արվեստի լուսանկարիչ-տարեգիրը: Խնդիրն, իհարկե, քանակը չէ միայն: Բեմի մեծ վարպետներ Վահրամ Փափազյանին, Հրաչյա Ներսիսյանին, Ավետ Ավետիսյանին, Գուրգեն Ջանիբեկյանին և ուրիշներին տարբեր դերերում պատկերող այնպիսի լուսանկարներ է արել Կլեկչյանը, որ դրանք հասնում են արվեստի մակարդակին: Գ. Խանդամիրից, Վ. Փիչխուլյանից, Ա. Քոչարից հետո Կլեկչյանն էլ, իր հերթին ու իր ժամանակին, շարունակել է լուսանկարչի դժվարին գործը, և դա գնահատելի է մեծապես. ի՞նչ կմնար թատրոնի վաղանցուկ, «այսրոպեական» արվեստից, եթե նրանց լուսանկարները չլինեին: Կարելի է ասել՝ թատերախոսականները, հոդվածները, քննադատական դիմանկարները: Բայց դրանք պետք է ամրապնդվեն, ապացուցվեն լուսանկարներով:

Ավտանքով պիտի ասել, որ ինչքան էլ լավ թատերական լուսանկարիչներ ենք ունեցել, մեր բեմական արվեստի «լուսանկարչական տնտեսությունը» բնավ հարուստ չէ և որակյալ չէ: Շատ չեն անցած-գնացած հիանալի դերասանների և, մանավանդ, բեմադրությունների մակարդակին համարժեք լուսանկարներ: Երբեմն պատահում է, հոդված ես գրում ընտիր մի դերասանի մասին, մինչդեռ լուսանկարները գալիս են ոչ թե հաստատելու, այլ հերքելու գրվածը՝ այնքան են դրանք անարվեստ ու գավառական:

Թող թույլ տրվի այս առիթով անելու ևս մի շեղում. հասկիվ թե դրա համար ուրիշ առիթ ներկայանա:

Մամուլում հաճախ են լսվել բողոքներ, թե ինչու մեր բեմի վարպետները ժամանակին չեն կինոնկարահանվել: Մարդիկ բողոքել են՝ համոզված, թե կինոնկարահանված դերակատարումը կարող է սերունդներին հանձնել մեծ վարպետի արվեստը: Միամիտ մոլորություն: Թատրոնն ու կինոն տարբեր արվեստներ են, տարբեր օրինաչափության են ենթարկվում: Ուղղակի նկարահանված ներկայացումն աննպաստ պատկերացում է տալիս և՛ բեմադրիչի, և՛ դերասանի մասին: Ուրիշ բան, երբ ներկայացումը հատկապես նկարահանվում է կինոյի օրենքներով, ինչպես Վ. Աճեմյանը և Ա. Հայրապետյանը նկարահանեցին «Ժայռը»: Ուրիշ կերպ՝ ուղղակիորեն արված կինոնկարահանումը լավ արդյունք չի տալիս: (Դրանում վերստին համոզվեցի, երբ Արմեն Գուլակյանի ծննդյան 80-ամյակի երեկոյին պատառի վրա տեսա Վահրամ Փափազյանին Արբենինի և Հրաչյա Ներսիսյանին Ֆյոդոր Պրոտասովի դերերում. ի՞նչ տխուր անդրադարձում): Մինչդեռ արվեստով արված լուսանկարը, ինչպես «Ավետ Ավետիսյանն Անտոնիոյի դերում» լուսանկարը, որի հեղինակն է Աղասի Կլեկչյանը, ավելի լավ պատկերացում է տալիս դերասանի հոգեբանական անձնավորման վարպետության մասին, քան որևէ կինոնկարահանում:

Սա է թատերական լուսանկարչության, այդ դեպքում՝ Կլեկչյանի արժանիքը: Լավ է, որ, բացի դիմանկարներից, նա ներկայացնում է նաև բեմավիճակներ ցույց տվող լուսանկարներ, մի բան, որ մեր թատերական լուսանկարչության մեջ թերագնահատվել է չափազանց: Այս առումով հետաքրքիր են Լենինականի դրամատիկական թատրոնի «Կուրաժ մայրիկը», «Ոճիր և պատիժ» բեմադրությունների լուսանկարները:

Կլեկչյանի լավագույն լուսանկարներում երևում է թատրոնի մարդը, այն, որ ժամանակին նա դերասան է եղել և դա օգնել է իրեն ըմբռնելու թատերական լուսանկարի յուրահատկությունները:

Կուպենայինք, որ Աղասի Կլեկչյանը նույն հետևողականությամբ շարունակեր իր թատերաշահ գործը և մանավանդ՝ ասպարեզ տար, աճեցներ նոր մասնագետների: Դա նույնիսկ ցանկություն չէ, այլ պարտավորեցում, քանի որ շատ տարիներ նա ղեկավարում է թատերական ընկերության լուսանկարչության արհեստանոցը:

ԼԵՎՈՆ ՀԱՍՎԵՐԴՅԱՆ



Ա. Կլեկչյան. Ավետ Ավետիսյան—Անտոնիո (Սունդուկյանի անվան թատրոն, «Ծարար, կիրակի, Երկուշաբթի»)



Ա. Կլեկչյան. տեսարան Լենինականի Մռավյանի անվան թատրոնի «Կուրաժ մայրիկը» ներկայացումից. կենտրոնում՝ Ժանետ Թովմասյան

ԱՐՎԵՍՏԻ ԱՇԽԱՐՀՈՒՄ ✦ ԱՐՎԵՍՏԻ ԱՇԽԱՐՀՈՒՄ

digitised by A.R.A.R.@